— Երկար խօսք չեմ ուզէր, գնա՛՝ իմացիր թէ ինչ է առաջարկութիւննին:

— Երթամ… բայց…

— Գիտե՛ս ուրեմն եւ չես կրնար համարձակիլ զրուցելու, անհաւատի որդի:— Եւ թեւէն քաշելով,— շո՛ւտ, զրուցէ՛ տեսնեմ,— ըսաւ:

— Չորս փոքրիկ աղջիկները, որք հայու զաւակ են՝ կ'ուզեն, որ իրենց յանձնուի, եւ երկու էլ մեծերը, որ դու միւսուլման ըրիր այս մօտերս…

— Ի՞նչ, աղջիկ տա՞մ իրենց, վեցն էլ հիմա ձեռոքս կը մորթեմ, գլխնին թող առնուն նստին,— ըսաւ կինը կատաղութեամբ եւ ոտք ելնելով:

— Բայց գիտես, Տիկին, թէ այդպիսի գործի մը հետեւանք ի՞նչ կը լինի:

— Ի՞նչ որ կուզէ թող լինի… բայց դու մատնիչ, դու իրենց ըսիր թէ այսպիսի աղախիններ ունիմ ես,— ըսաւ կատաղութեամբ յարձակելով երիտասարդին վրայ, որ յարգանօք եւ հանդարտութեամբ քայլ-քայլ ետ կը քաշուէր:

— Աստուա՛ծ վկայ, որ ես էլ չեմ գիտէր թէ ուսկից են իմացեր:

Այս միջոցիս ներս մտաւ պառաւ աղախին մը եւ դռան մէջ կեցած՝

— Տիկին, աստուած քեզ պահէ, այդ հայու աղջիկը, որ ամիսէ մը ի վեր բանտն էր, չի կայ, պատուհանին երկաթները կոտրտէր փախեր է:

— Ի՞նչ կ'ըսես. ողորմելի տկար աղջիկ մը երկաթները կոտրտէ՞, անկարելի բան է. Ալի, շո՛ւտ պատասխան տուր, այդ աղջիկը ո՞վ փախցուց, եթէ ոչ՝ հիմա…

Եւ դաշոյնը մերկացած՝ երիտասարդին վրայ յարձակեցաւ, որ թեւէն բռնելով միշտ հանդարտութեամբ